ՀՏԴ : 929:1(56) Տեմիրճիպաշյան + 891.981

Doi:10.54503/0135-0536-2023.2-164

ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԽՆԴԻՐԸ ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանալի բառեր՝ Եղիա Տեմիրճիպաշյան, նյութ, հոգի, կյանք, մահ, սեր, գոյություն, պարզ, բարդ, առեղծված, Նիրվանա:

Նախաբան

Արևմտահայ բանաստեղծ, արձակագիր, իմաստասեր Եղիա Տեմիրճիպաշյանի (1851–1908 թթ.) գործունեության ակտիվ շրջանում՝ XIX դ. վերջին քառորդին, գոյության առեղծվածի՝ նյութի և հոգու, կյանքի, մահվան ու անմահության հարցերը տևական քննարկման էին ենթարկվում ժամանակի հայ և համաշխարհային գրական-գիտական-իմաստասիրական մտքի կողմից: «Իմաստասէրք ոմանք կ'ենթադրեն, թէ մարդկային մեծ ամբողջն միայն անկորնչելի,– գրում էր Եղիշէ վրդ. Այվազեանը,– եւ թէ անձնիւր կեանք, իւր անհատութեան մէջ, երեւոյթ մի է անցաւոր եւ խաբուսիկ: Երբ մարդ կը մեռնի, ընութիւն կ'առնու վերստին իւր փոխ տուած նիւթն. մարմինն կը լուծուի»[1]: Բայց թեև «դիոյն պատառներն կը խառնուին եւ կը ցրուին ի հող, (...) իւր գլուխն կը մնայ միշտ կենդանի, եւ դարուց ի դարս կը խօսի անլռելի»: «Բայց ա՞յս է միթէ ճշմարիտ անմահութիւնն», – հարցնում է Եղիշե վրդ. Այվազյանը, ըստ էության, մերժելով այդ գաղափարը, քանզի այդ դեպքում «գործն աւելի անմահ պիտի լինէր քան գործողն. կենաց մի վայրկեանն աւելի զօրութիւն պիտի ունենար քան ամբողջ կեանքն»[2]: Բազմանշանակ էր նաև Գրիգոր Օտյանի բացականչությունը. «Երանի՜ որք կը մեռնին ու կրնան ըսել մնացողաց. «Ինտռեցէք հիմա ու գտէք ի՛նչն ու ինչուն այս կեանքին, այս աշխարհին». ահա իմ փիլիսոփայութիւնս ...»[3]: Իսկ Ռեթեոս Պերպերյանը, մխիթարական խոսքեր հղելով Եղիայի հորեղբորորդի Գարեգին Տեմիրճիպաշյանին, եղբոր՝ Գալուստի մահվան կապակցությամբ, գրում էր. «Կը մտածես թէ ի՛նչ եղաւ այն հոգին որ այդ փարելի մարմինը կը շնչաւորէր, որ այդ աչերուն մէջ կը ժպտէր, որ այդ գանկին մէջ կը խորհէր, որ գքեզ կը սիրէր, որ չքնաղ ձրիւք

---

* Ներկայացվել է 19. XII. 2022 թ., գրախոսվել է 20. XII. 2022 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.: Հոդվածը, որպես զեկուցում, ընթերցվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտում 2022 թ. ապրիլի 26–27-ին տեղի ունեցած Վ. Կիրակոսյանի մահվան տարելիցին և հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանրապետական գիտաժողովում:

[1] Այվազեան. 1887, 101:

[2] Այվազեան. 1887, 102:

[3] Օտեան. 1888, 241:

կը զարդարուէր, որ յոյսեր ու փափաքներ կը տածէր յինքեան, յո՛յս ու փափա՛ք, երազ ու մոխիր ամենայն»[4]:

Ե. Տեմիրճիպաշյանը՝ Մահվան, Վերջի, Ոչնչի Մեծ Առեղծվածի առջև

Վերը նշված հարցադրումները, բառի բուն իմաստով, կեղեքում էին նաև Ե. Տեմիրճիպաշյանի միտքն ու հոգին: Նա նույնպես իր մտերմի՝ Ռ. Պերպերյանի նման երանի էր տալիս «երջանիկ» այն ժամանակներին, երբ խոսքեր չէին պակասում «սգաւոր մը մխիթարելու համար»: Մինչդեռ արդի մարդը «որպէս զի կարենայ մխիթարուիլ, պէտք է մխիթարուած ըլլայ»: Իսկ «ի՞նչ բան կարող է մխիթարել իննեւտասներորդ դարու մարդն»: Այս հարցին պատասխանելու համար, ըստ Եղիայի, պիտի նախ և առաջ պատասխանել նաև այն «տենդալիր հարցման», թե՝ «Ի՞նչ կայ յայնկոյս գերեզմանին»: Ըստ նրա, սակայն, ցավալի իրողությունն այն է, որ նույնիսկ արդի գիտության կարկառուն դեմքերը շփոթմունքի մեջ են: «Դեռ մօտ ժամանակներս՝ Բասդէօռ մեծ բնալոյծն, Սբէնսէր մեծ ընկերաբանին արձագանգ ըլլալով՝ որ արձագանգ էր եղած Թաղէսին ու Պիւթագորոսին,– գրում է Ե. Տեմիրճիպաշյանը,– կը հարցնէր ապշութեամբ ու մտատանջութեամբ. «Անկէ անդին ի՞նչ կայ»: Զը գիտենք …»[5]:

Մարդկային մտքի առջև ծառացող ամենախրթին այս հարցադրումների հանդեպ Ե. Տեմիրճիպաշյանը, ըստ էութեան, նույնպես կարող էր կրկնել Էմիլ Լիտրեի խոսքերը, թե՝ «Ես ի նոցանէ եմ որք կարեւորութիւն կու տան կենաց եւ կը խորհին թէ կ'արժէ լաւ գործածուիլ: Այլ մահուան վրայ ծանօթութիւն չը կրնար ունենալ կենդանի էակն. որովհետեւ երբ այն կը սկսի, ինք կ'աներեւի»[6]: *Այսպես, Ե. Տեմիրճիպաշյանը, ի վերջո, կանգ է առնում Մահվան, Վերջի, Ոչնչի Մեծ Առեղծվածի առաջ. «… կեանքն ի՞նչ է, մահն ի՞նչ է,– Հայկուհի սանուհուն՝ նրա մանկիկի մահվան առիթով գրած մխիթարական նամակում մտորում է Եղիան,– ի՞նչ է մարդն՝ որ՝ հողեղէն էակ մահկանացու՝ հրեշտակաց գոյութեան ու հոգւոյ անմահութեան գաղափարն ունեցաւ …»: Հավաստելով «միայն բանական» մարդու տգիտությունը ոչ բանական հյուլեի «հրաշալի կարողութեան» հետ, գրում է. «Այս մեր փոքրիկ երկրագունտն, որուն՝ տիեզերաց մէջ կետի մը չափ կարեւորութիւն ունենալուն՝ ուր ուրեմն համոզուեցանք, այդ փոքրիկ կետն անգամ, այո՛, մարդոյն համար անհունութիւն մ'է տակաւին. (…) դեռ մեծաւ մասամբ առեղծուած մ'է հողագունտն. ինչ թաքուն բաներ ունի, դեռ հողն ի՞նչ խորհուրդներ ունի մեր մտաց համար, զոր աստուածային կ'անուանենք. Ահաւասիկ մեր մտաց առջեւ կը կանգնի մեծ հարցական կետ մը,– փոքրիկ մանուկ մը: (…) Ի՞նչպէս ծնաւ, ի՞նչպէս մեռաւ նա …»*[7]:

Անցավորի ու անանցի, մարմնի և հոգու հարցերն է շոշափում Եղիան նաև «Առ մեծ. Եղնիկ էֆէնտի Փափազեան» գրած նամակում՝ վերջինիս «սիրելի եղբայր» և իր «սիրելի բարեկամ» Գարեգին Փափազյանի մահվան կապակ-

[4] Պ է ր պ է ր ե ա ն. 1887, 514–515:
[5] Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1884, 127:
[6] Լ ի դ ռ է. 1886, 218:
[7] Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1885, 95

ցութեամբ: «Կրօնք եւ դիցաբանութիւնք կը նկարագրեն մեզ այն խնկաւէտ հեշտաւէտ բնագաւառներն, ուր անթառամ ծաղկունք կը փթթին ամեն վայրկեան ու կը բուրեն յաւիտեան», գրում է նա՝ միաժամանակ հարցնելով. «Իրա՞ւ է թէ մարմինն անցաւոր է, և հոգին անանց ...»: Խնդրում է Եղնիկին, ով ունկնդրում է բնութեան ձայներին և մարդկային լեզվի թարգմանում «աղի ալեաց և աստեղալի երկնից խորհրդաւոր ձայներն», մեկնաբանել, թե «ի՛նչ կը յայտնեն այդ ձայնք խորախորհուրդ՝ կենաց ու մահուան առեղծուածներուն վրայ ...»[8]:

Որքան էլ անքննելի ու առեղծվածային, բայց Տեմիրճիպաշյանը, իհարկե, ուներ խրթնագույն այդ հարցերի ի՛ր պատասխանները, որոնք, սակայն, միշտ չէ որ ընդունվում էին նաև իր մտերիմների կամ գիտուն ու բանիմաց անձանց կողմից: Եղիան խոստովանում է, որ Կրոնական ժողովը նույնիսկ «դիտողութիւն ըրած է Արփիարեան էֆէնտիին թէ է՞ր հիւրընկալած է Հանդիսից խմբագրապետին[9] Փոշի խորագրով քերթուածն, յորում (...) հռչակած էի ամենայնի ոչնչութիւնն»: Իսկ երբ դոկտ. Արծրունու գերեզմանի վրա ևս արտասանել է «այդ մեծ բառն՝ ոչնչութիւն», իր ուսուցիչ Ներսես Վարժապետյանն ընդարձակ մի գրութեամբ «բացատրութիւն ու լոյս» է խնդրել իրենից՝ «հոգւոյ անմահութեան խնդրոյն վրայ»[10]:

Մեծ Ոչնչի իմաստասիրությունից դեպի «գերագույն հանգիստը»՝ Նիրվանա

Ե. Տեմիրճիպաշյանի տեսակետը, իհարկե, չէր հանգում Մեծ Ոչնչի իմաստասիրությանը: Այս հարցի վրա լույս է սփռում, մասնավորապես, Նուրանիա ստորագրությամբ նրա հրապարակած «Պուտտային ազդեցութիւնն», ինչպես ինքն է բնորոշում՝ «իմաստասիրական վէպ»-ը: Այդտեղից իմանում ենք, որ Տեմիրճիպաշյանը, դեռևս դպրոցական նստարանից ուսումնասիրելով Հնդկաստանի պատմությունը, լեզուն, կրոնն ու իմաստասիրությունը, թարգմանություններ կատարելով Վեդաներից, խորապես հրապուրվել է Նիրվանայի գաղափարով: Ու նրան թվացել է, թե խորախորհուրդ այդ գաղափարը՝ «Քրիստոնէութեան օրհնաւէտ օրրանին վրայէն ու Սինա լերան մշտավառ մորենւոյն ընդմէջէն», հմայելով տանում է իրեն «... հո՛ն ուր (...) երկիւղած հոգին հագագ մը միայն ունի, հառաչանք մը միայն – Նիրվանա՛»[11]: Նիրվանայի այս կարոտը Եղիայի միջոցով տարածվում էր նաև իր շրջապատի, մտերիմների մեջ, տիրում նրանց մտքերին ու հոգիներին: Բնորոշ է մանկության տարիներից նրա հոգեհարազատ բանաստեղծի՝ Հովհաննես Սեթյանի անկեղծ խոստովանությունը՝ երկարաշունչ քերթվածի տեսքով: «Է՞ր զայս հուր բոց արկիր ի կուրծս իմ, Եղիա», – բացականչում է նա. «Զի՞նչ արարիր. է՞ր, անխոհեմ դու տղայ», «Է՞ր հրպեցիր քո մատն իմ խեղճ ճակատուն // Եւ խորհրդով օծեցիր»[12]:

---

[8] *Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1887, 42–43:*

[9] *Նկատի ունի իրեն՝ Ե. Տեմիրճիպաշյանին՝ «Երկրագունտ»-ի տնօրեն-խմբագրապետին:*

[10] *Ե. 1887, 227:*

[11] *Ն ո ւ ր ա ն ի ա. 1888, 236:*

[12] *Ս ե թ ե ա ն. 1887, 225:*

Հ. Սեթյանի հետ Տեմիրճիպաշյանի հոգեկան-բանաստեղծական երկխոսությունը վաղուց էր սկսվել: Ուղիղ մեկ տարի առաջ՝ 1886 թ., նույն «Երկրագունտ» հանդեսում լույս էր տեսել Հ. Սեթյանի՝ Ե. Տեմիրճիպաշյանին ձոնված «Գոհութիւն» քերթվածը, ուր դիմելով վերջինիս՝ ուղղակի հայտարարում էր.

… Ընդէ՞ր չասեմ թէ յաճախ դու ես պատճառ
Որ համակուիմ խորհուրդներով վեհ, անճառ,
Ոյց իշխան սուրբն է թախիծ:
… Ունիս բառեր որ տան՝ 'դերկա՛ր յերազել:

Եվ մի հարցում. «… Ընդէ՞ր արդեօք մեծ տրտմութիւնն ես, Եղիա՛…»[13], *որ պատճառ էր դարձել Եղիայի չափածո պատասխանին: Ե. Տեմիրճիպաշյանի «Նիրվանա» վերնագրով ծավալուն քերթվածը բացվում էր Սաքիա Մունիի՝ բուդդայական վարդապետության հիմնադրի մի բնորոշ ասույթով՝ «Հոգիս համակ լցուած է կարեկցութեամբ աշխարհի հիւանդութեան համար: Կը խնդրեմ ես դերագոյն հանգիստն, անփոփոխ բնակարանն, յաղթանակն ի վերայ ժամանակին եւ ի վերայ միջոցին»*[14]*: Եվ, քանի որ Հ. Սեթյանն իր բանաստեղծության մեջ հիշել էր իրենց մանկությունը, Եղիան ևս նախ անդրադարձ է կատարում դեպի այդ տարիները, երբ «Տըղա՛յ էի: Ծընընդավայրն իմ – այն դրա՛խտ – // Էր լի բուրմամբք, երգօք, շողիւք, սո՛ւրբ շընչովք …», երբ ժպիտն անպակաս էր իր դեմքից, «եւ հուր վառէր սեաւ յիմ աչս …»*[15]*: Ապա սկսվել են տանջալից որոնումներն անհասանելի թվացող հարցերի՝ Կյանքի ու Տիեզերքի խորհրդավոր Արարչի, ծնունդի ու մահվան, գոյության իմաստի … Փորձել է «ըզբաւ առեղծուածոցն աշխարհի» գտնել հին գրությունների, իմաստունների /«Թաղէս, Սոկրատ, Պղատոն, // Արիստոտել, Անաքսաքոր եւ Կատոն»/ մտքերի մեջ, բայց … «Ի զո՛ւր: Ոչ ոք գիտէր …»: Արևմուտքից հուսախաբված՝ դիմել է դեպի Արևելք՝ «Հըրէաստան, ի Հընդիկըս», ուր հիվանդ ու տառապալից Հոբն էր միայն, որ «Գիտեր թէ՝ ո՛ւր գընայ մարդ // Յետ իւր մահուան՝ երկիր է մութ խաւարին, // Ուստ դառնայցէ ոչ. հանգիցէ՛ յաւէտ անդ»: Եվ պաշտել է Հոբին. «Որ ինձ ուսոյց թէ բնաւից է վախճանն հող»: Այստեղից էլ նրա մեջ բույն է դրել Ոչնչի գաղափարը, որով «Մեծ ըզգայի գիս եւ հրգօր …»*[16]*:*

Նոր ճշմարտության՝ Մեծ Սիրո գաղափարը

Բայց դա դեռ ամենը չէր: Հանդիպելով Հիսուսին՝ կանգնել է մի նոր ճշմարտության՝ Մեծ Սիրո *գաղափարի քարոզի առջև, ըստ որի՝ «Սէր՝ ճշմարիտ. ա՛յլ ամենայն է ոչինչ»: Սակայն խաչված Հիսուսի ոտքերի մոտ խորհրդավոր մի ձայն դարձյալ կանչում է նրան ավելի հեռուն, ավելի բարձր ոլորտներ, ուր ամեն բան շուրջը, բնության մեջ՝ «Աղաղակեն (…) // Յանհուն ի ձայն ըզբաւն անհուն – Նիրվանա՛»: Ու թվում է՝ գտել է այն, ինչ որոնում էր տենդա-*

[13] Սեթեան. 1886, 269:
[14] Ե. 1886, 329:
[15] Ե. 1886, 330:
[16] Ե. 1886, 331–332:

գին ու թափառական՝ «զանէացո՛ւմն իմ եսին // Յանհատակ ծոց տիեզերաց անպարոյր, /.../ Զոչընչութիւնն անգիւտ, անճա՛ռ, անվախճա՛ն ...»[17]*: Այս տողերից կարելի է կարծել, թե հենց Ոչնչությունն է Տեմիրճիպաշյանի իմաստասիրության միջուկն ու էությունը: Մինչդեռ քերթվածը դեռ չի ավարտվել. Սիտտարթա – բուդդայի և «չքնաղագեղ Եազօտարայ» պատմությունը շարունակվում է. « ... արբշիռ սիրով, երգօք ու խընկօք» ննջող Սիտտարթան հանկարծ զարթնում է «ընդոստ. տըրտո՛ւմ ընդմիշտ», ծանր հոգոցով: Եվ «արեգածին» կնոջ մտահոգ հարցին՝ «Զի՞նչ պակասի իշխանին», պատասխանում է կարճ ու դիպուկ մի բառով՝ «Զը գիտե՛մ»: Եվ հենց սա՛ է նաև Եղիայի բուն պատասխանը Հ. Սեթյանին.*

... Գիշերախառն, Յովհա՛ն, ի ձայնդ յարուցեալ,
Ցը մա՛հ տըրտում, պատասխան տամ. «Զը գիտե՛մ»[18]:

Եվ ահա մեկ տարի անց՝ 1887 թ., նույն «Նիրվանա» վերնագրված Հ. Սեթյանի քերթվածին Եղիան պատասխանում է մեկ այլ չափածոյով, որի խորագիրը՝ «Բանաստեղծութիւն»[19]*, առաջին հայացքից չեզոք էր թվում քննարկվող խրթին հարցերի տեսակետից, սակայն, ըստ էության, պարունակում էր նաև (վերը նշված) Հարցի նոր պատասխանը՝ խտացված վերջին տան տողերում.*

... Ե՛ւ քո, Յովհա՛ն, եւ քո՛ մայրն է Քերթուութիւն,
Որ եւ մայրն իմ: Եղբարք եմք մեք համածնող:
Մեր ճակատն, ո՛հ, մերթ ողողէ մըթութիւն,
Այլ է հոգին մեր յաւիտեան լուսողող:
Մեր նո՛յն է սէր. աչք մեր ի նո՛յն կէտ յառին.
Տաղք մեր են մութ, այլ հրոչակեն ըղբարի՛ն[20]:

Ահա և հոգու էության Եղիայի դիպուկ բնորոշումը. «... բիւրեղ մ'է հոգին, որ երկնային ճաճանչէ մը կը գունաւորի, որ սիրային շունչէ մը կ'որորի, ուր կ'անդրադառնան եթերին թրթռմունք, ուր արձագանգ կը գտնեն բնութեան բիւր ներդաշնակութիւնք»[21]*: Նուրանիան վկայում է նաև հոգու նյութական էությունը. «Բան մ'որ շարժեմ, հոգիս ալ միասին կը շարժի,– գրում է նա,– ինչ որ աննիւթ կը նկատենք, հոգին, զայն յիս, այո՛, կը զգամ շարժիլ ...»*[22]*:*

---

[17] *Ե. 1886, 334:*

[18] *Ե. 1886, 334–335:*

[19] *Ե. 1887, 349–350: «Ընթերցողք կը յիշեն Գոհութիւն վերնագրեալ ա՛յն գեղեցիկ բանաստեղծութիւն, զոր անցեալում Հանդիսիս մէջ ինձ ուղղեց ազգային առաջին բանաստեղծներէն Յովհաննէս էֆէնտի Սեթեան: Ի պատասխանի գրած տաղերէս մին՝ Նիրվանան՝ անցեալ տարի հրատարակեցի. միւսն ալ այսօր կուտամ ի հրատարակութիւն՝ Սեթեան էֆէնտիի վերջին վսեմ քերթուածոյն առթիւ» (տե՛ս Ե. 1887, 349):*

[20] *Ե. 1887, 350:*

[21] *Ե. 1888, 469:*

[22] *Ն ո ւ ր ա ն ի ա. 1888, 463:*

Շարժում՝ պարզից դեպի բարդը, ծանոթից դեպի անծանոթը

Այդպես, պարզից դեպի բարդը, ծանոթից դեպի անծանոթը, մակերեսից դեպի խորքն անկասելի ու անվերջանալի ընթացքի մեջ մարդու էությունն ու հոգին, ի վերջո, հասնում են գերբնական մի վիճակի, ուր «Մարդս ա՛յնքան կը վսեմանայ, ո՛րքան խորհուրդն՝ որ զայն կը պակուցանէ՝ կը մեծանայ»: Այդ մակարդակում այլևս, ըստ Ե. Տեմիրճիպաշյանի, «մեր խօսքն ներդաշնակութիւն մ'է, մեր աչքն անհունութիւն մ'է, երբ մեր միտքն՝ էութեան գերագոյն խնդիրն յուզէ»[23]*: Դա այն վիճակն է, ըստ Հակոբ Օշականի, «բացառիկ այն հոգեհարդարումը, ջիղերը լարելու, հանդերձելու այն կերպը, որով կարգ մը մարդիկ երկինքը ու յարակից լրութիւնները, զգայութիւնները, անդրադարձները կ'իրացնեն …»: Այլ խոսքով՝ «հանդէս մը զգայութիւններու (գրեթէ ֆիզիք), ուր այդ մարդոց հոգիի աչքերը կը տեսնեն մեզի անհաս ձեւեր, պատկերներ: Դէպի զգայախաբական տեսիլքները և անոնց իրականութեան տեղ ամրանալը՝ մէկ է ճամբան հանճարին, ինչ-պէս յիմարին համար (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»*[24]*: Երկու վիթխարի ծայրակետերի միացման կենտրոնում լինելու պարագան չեչտում էին նաև Եղիայի ժամանակակիցները: Գրիգոր Զոհրապը գրում էր. «Այն բարձանց վրայ կամ այն անդունդներուն մէջ ուր ներեալ է Եղիային խոյանալ կամ գահավիժիլ, վհուկ մը կամ վարդապետ մը ըլլայ պէտք է և Եղիան երկուքն ալ է միանգամայն (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»*[25]*: Կարևոր է նաև այն եզրահանգումը, որն անում է արձակագիր, լրագրող Մկրտիչ Շահնազարը. «Իրմէ զատ իր գաղափարները չդաւանող մին երբ տեսնուէր այդ վիճակին մէջ,– գրում է նա,– չպիտի վարանէինք անտարակոյս անուանել զայն յիմար, այլ Եղիայի մասին ի՞նչ կայ անբնական (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»*[26]*:*

Ե. Տեմիրճիպաշյանի իմաստասիրական հայացքների գնահատության ընթացքը

Այնուամենայնիվ, ժամանակակիցներն ու հետագա հետազոտողները միշտ չէ, որ ամբողջության մեջ իրավացի կամ արդարացի էին Տեմիրճիպաշյանի իմաստասիրական հայացքների և, ավելի ընդհանուր, նրա ստեղծագործական անհատականության էության ամբողջական գնահատության հարցում: «Զեմ գիտեր թէ քերթող Տէմիրճիպաշեան՝ Նիրվանա ըսելով, ի՛նչ է հասկցած, իր հիացումները միշտ մեկնութեան կարօտ են»[27]*,– գրում է Հ. Սիմեր – Երեմյանը: Մինաս Չերազի կարծիքով՝ «Լիդռէի տաղանդը կրցաւ պահ մը հակազդել, /…/ Գրական դպրոցի այդ իմաստասէրին ազդեցութիւնը Ազատախոհեան ըրաւ զայն ու ծնունդ տուաւ Փիլիսոփայական Բառարանին ու Գրական եւ Իմաստասիրական Շարժումին: Սակայն Պուտտայի Նիրվանային ներգործութիւնը աւելի հզօր եղաւ յեղյեղուկ նկարագրին վրայ»*[28]*:*

---

[23] Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1887, 44:
[24] Օ շ ա կ ա ն. 1980, 44–45:
[25] Զ օ հ ր ա պ. 1892, թիւ 124:
[26] Շ ա հ ն ա զ ա ր. 1891, թիւ 2190:
[27] Ե ր ե մ ե ա ն. 1913, 32:
[28] Չ ե ր ա զ. 1929, 30:

Սակայն պետք է նկատել, որ ժամանակի հետ գնահատականներն ավելի ու ավելի հավասարակշռված են դառնում՝ առավելագույնս մոտենալով Ե. Տեմիրճիպաշյանի՝ նման բարդ և խոր անհատականության էության բուն ընկալմանն ու մեկնաբանմանը: Նորագույն հետազոտողներից Ալբերտ Կոստանյանը, տասնամյակներ անց, այն համոզմունքն էր հայտնում, թե «Եղիան գիտնական փիլիսոփա չէ, այլ իմաստասեր է, բառի հայկական ու նախնական իմաստով: (...) Եղիայի փառքը չի կազմում այս կամ այն գրքային փիլիսոփայական ըմբռնման հետևելը»[29]: Ստեփան Թոփչյանը, նույնպես փորձելով ի մի բերել գրեթե մեկ դարի ընթացքում Տեմիրճիպաշյանի մտածողությանը տրված բազմազան, հաճախ իրարամերժ գնահատականները, նկատում է. «Տեմիրճիպաշյանը հայ մշակույթի պատմության մեջ ներկայացվել է իբրև ամենահակասական մտածողներից մեկը, էկլեկտիկ», սակայն, գրականագետի համոզմամբ, «համենայն դեպս ամեն տեսակ հակասությունների մեջ կա մի միասնություն և հետևողականություն (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»[30]: Ինչ վերաբերում է Նիրվանային, ապա Ստ. Թոփչյանն այս հարցում ևս, մեր կարծիքով, իրավացիորեն գտնում է, որ «Տեմիրճիպաշյանը Նիրվանան չէր շփոթում ոչնչի հետ: Նիրվանայի գաղափարը բարձրագույն հարմոնիայի հասնելու միջոց է նրա ըմբռնումով, «անդրաշխարհային մեղեդի», որ մարդկային ոչ մի նվագով հնարավոր չէ արտահայտել»[31]:

Ինքը՝ Եղիան, չէր թաքցնում իր հոգեկան որոնումների էությունը, որի արդյունքը դեռևս մշուշոտ էր նաև իր համար: Բոլոր տեսակի՝ նույնիսկ մինչև հոգու խորքը խոցող ու վիրավորական քննադատություններից և թյուրատեսական մեկնաբանություններից նա փորձում էր պաշտպանվել ամենաանմեղ միջոցներով՝ դիմելով մինչև անգամ ինքնաքննությամբ ինքնարդարացման եղանակին: «Եթէ նոր սերունդն,– գրում է նա,– որ Եւրոպացի յոռետես հեղինակաց ծանօթանալէ յառաջ զիս կարդաց եւ զիս լսեց, օր մ՚ամբաստանէ զիս եւ անիծէ, անձինս արդարացման համար պիտի կրնամ ըսել երկու բան, զորս այժմէն իսկ կ՚ըսեմ ահա»[32]: Հետագա շարադրանքի մեջ նա հավաստում է, որ նախ՝ հոռետեսության հետևելու հակումը իր մեջ չի ձևավորվել իր կամքով ու գիտակցական ընտրությամբ: Պարզապես «բնական տրամադրութիւն մը կամ՝ աւելի գիտական բառով՝ իմ խառնուածքս, իմ կազմուածքս զիս մղեց՝ գրագիտաց, բանաստեղծից եւ իմաստասիրաց մէջէն ընտրել յոռետեսներն ...»: Երկրորդ փաստարկն այն էր, թե «յոռետեսութիւնն յառաջացեալ եւ յառաջացուցիչ վարդապետութիւն մ՚է»: Եղիան մեկնաբանում է, թե միայն լավատեսությամբ միտքը միակողմանի, միօրինակ է զարգանում, ահա թե ինչու, «Պարզ աչաց ներքեւ, ոյք կը տեսնեն իրաց մակերեւոյթն, իրաց գուարթ կերպարանքն», բնությունը դրել է նաև «ներքին աչք մը խորատես, որ կը թափանցէ իրաց վերօթեաց, վրիպուկ, անտեսանելի կողմն. ի մի բան՝ լաւատես աչաց ներքեւ դրած է բնութիւնն յոռետես աչքն (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»: Հետևապես, հոռետեսությունը՝ «առաւել քան զլաւատեսութիւն», նպաստում է մտավոր զարգացմանը, քանզի նրա աղբյուրը «զգայնութեան կամ մանա-

[29] Կ ո ս տ ա ն յ ա ն. 2004, 90:
[30] Թ ո փ չ յ ա ն. 1987, 21–22:
[31] Թ ո փ չ յ ա ն. 1987, 57:
[32] Ե. 1888, 490–491:

ւանդ նրբազգայութեան մէջ է»: Այդպիսով, եզրակացությունն այն էր, թե նախ՝ «յոռետեսութիւնն ի ընութեան իսկ է», և ապա՝ «յոռետեսութիւնն ոչ է դժիսեմ դուստրն իննեւտասներորդ դարուն, որ սնոյց այլ ոչ ծնոյց զայն»:

Վերջապես, այդ ամենն ամենևին չէր հակասում Տեմիրճիպաշյանի կողմից միանգամայն ընդունելի զարգացման բարեշրջային սկզբունքին, որը, իր հերթին, հիմնված էր դիալեկտիկական հակադրամիասնության օրենքի վրա, այն է՝ «Լաւատեսութենէ Յոռետեսութիւն կ'երթանք, Յոռետեսութենէ Լաւատեսութիւն պիտի վերադառնանք»[33]:

Եզրակացություն

Այսպիսով, XIX դ. վերջին քառորդին Եղիա Տեմիրճիպաշյանի մտածողության համակարգում արտահայտվող «Գոյության Առեղծվածի» խնդրի քննությունը բերում է այն համոզման, որ նա, թեև դիմել է հնդկական Վեդաներում ավանդված Նիրվանայի գաղափարին, սակայն, ի վերջո, հանգել է ոչ թե, այսպես կոչված, Մեծ Ոչնչի, այլ՝ քրիստոնեական Մեծ Սիրո ճշմարտության, ըստ որի՝ «Սէր՝ ճշմարիտ. ա՛յլ ամենայն է ոչինչ»: Իրողություն, որը հաստատվում է նաև Ե. Տեմիրճիպաշյանի իմաստասիրական հայացքների, ստեղծագործական վաստակի գնահատության ընթացքի վերլուծությամբ:

Պետրոս Դեմիրճյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Գիտական հետաքրքրությունը՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության, գրականագիտական և գրաքննադատական բազմաթիվ հոդվածների: pdemirchyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այվազեան Ե. 1887, Հոգւոյ անմահութիւն.– «Երկրագունտ» (Կ. Պոլիս), թիւ 3–4, էջ 101–105:

Ե. 1886, Նիրվանա. Պատասխան առ Յովհաննէս Սեթեան.– «Երկրագունտ», թիւ 7, էջ 329 – 335:

Ե. 1887, Բանաստեղծութիւն. Առ Յովհաննէս Սեթեան.– «Երկրագունտ», թիւ 7–8, էջ 349–350:

Ե. 1887, Եկեղեցական բարեկարգություն. – «Երկրագունտ», թիւ 5–6, էջ 227:

Ե. 1888, Սփոփանք ռամկին.– «Երկրագունտ», թիւ 10, էջ 468–474:

Ե. 1888, Յոռետեսութիւնն ի գաւառս.– «Երկրագունտ», թիւ 11, էջ 490–491:

Երեմեան Ս. 1913, Եղիա Տէմիրճիպաշեան.– Վենետիկ, տպագր. Ս. Ղազար, 1–10 շարքեր, շարք 4-րդ, 484 էջ:

Զօհրապ Գր. 1892, Եղիա Տէմիրճիպաշեան.– «Բիւզանդիոն» (Կ. Պոլիս), թիւ 124:

Թոփչյան Ստ. 1987, Կերպ և իսկություն, Երևան, «Սովետական գրող» հրատ., 487 էջ:

Լիդռէ է. 1886, Կեանք եւ մահ.– «Գրական եւ Իմաստասիրական Շարժում», տետր երկոտասաներորդ, Կ. Պոլիս, տպագր. Պաղտատլեան (Արամեան), էջ 218:

[33] *Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1891, 40:*

Կոստանյան Ա. 2004, Բացարձակի որոնումը, Երևան, «Սարգիս Խաչենց», հրատ., 804 էջ:

Նուրանիա. 1888, Պուտտային ազդեցութիւնն.– «Երկրագունտ», թիւ 5, էջ 233–238:

Նուրանիա. 1888, Պուտտային ազդեցութիւնն. – «Երկրագունտ», թիւ 10, էջ 462–468:

Շահնազար Մ. 1891, Եղիա Տէմիրճիպաշեան ի Գատըգիւղ.– «Արեւելք» (Կ. Պոլիս), տպագր. «Արեւելք լրագրոյ», թիւ 2190:

Չերազ Մ. 1929, Կենսագրական միւսիոններ. – «Ամբողջական երկեր», թիւ Գ, Փարիզ, Օշական հրատ., 74 էջ:

Պէրպէրեան Ռ. 1887, Գալուստ Տէմիրճիպաշեան.– «Երկրագունտ», թիւ 11–12, էջ 514–515:

Սեթեան Յ. 1886, Գոհութիւն.– «Երկրագունտ», թիւ 6, էջ 268–270:

Սեթեան Յ. 1887, Նիրվանա.– «Երկրագունտ», թիւ 5–6, էջ 222–226:

Տէմիրճիպաշեան Ե. 1884, Առ որդեկորոյս հայրն Տ. Հովհաննէս աւագ քահ. Մկրեան.– «Գրական եւ Իմաստասիրական Շարժում», տետր յոթներորդ, Կ. Պոլիս, էջ 127:

Տէմիրճիպաշեան Ե. 1885, Մարդ եւ մահ (Թուղթ առ սանուհին).– «Երկրագունտ», թիւ 2, էջ 93–96:

Տէմիրճիպաշեան Ե. 1887, Գարեգին էֆէնտի Փափազեան.– «Երկրագունտ», թիւ 1–2, էջ 41–45:

Տէմիրճիպաշեան Ե. 1891, Տարերք Պատմութեան Իմաստասիրութեան, Կ. Պոլիս, տպագր. Գ. Պաղտատլեան, 40 էջ:

Օշական Յ. 1980, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 8, Անթիլիաս (Լիբանան), հրատ. Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 506 էջ:

Օտեան Գր. 1888, Իմաստասիրութիւն մահուան.– «Երկրագունտ», թիւ 6, էջ 241:

ПРОБЛЕМА ЗАГАДКИ БЫТИЯ В СИСТЕМЕ МЫШЛЕНИЯ ЕГИИ ТЕМИРЧИПАШЯНА

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Резюме

Ключевые слова: Егия Темирчипашян, материя, душа, жизнь, смерть, любовь, бытие, простое, сложное, загадка, Нирвана

В активный период деятельности Егии Темирчипашяна (1851–1908), в последней четверти XIX века, загадки бытия: вопросы материи – души, жизни, смерти и бессмертия, постоянно обсуждались тогдашней литературно–научно–философской мыслью. Упомянутые вопросы буквально угнетали также разум и душу Егии Темирчипашяна. В конце концов, он останавливается перед тайной Смерти, Конца, Огромного Ничто. Точка зрения Е. Темирчипашяна, конечно, не сводилась к философии этого Огромного Ничто. На этот вопрос проливает свет, в частности, изданный под

псевдонимом Нурания, по определению самого автора, его философский роман «Влияние Бутты». Оттуда узнаем, что он, еще со школьной скамьи, изучая индийскую историю, язык, религию и философию, был глубоко увлечен идеей Нирваны. Потом начались мучительные поиски смысла бытия… Он пытался найти ответы на тайны мира в древних писаниях, в мыслях мудрецов Запада и Востока, но тщетно: «Никто не знал». В конце концов, встретив Иисуса, он столкнулся с новой истиной, проповедью идеи Великой Любви, согласно которой «Истинная любовь есть все …». Таким образом, по Темирчипашяну, в неудержимом и бесконечном процессе от простого к сложному, от поверхности к глубине, человеческая сущность и душа достигают сверхъестественного состояния, где «Человек настолько становится величавым, насколько тайна, устрашающая его, возрастает».

Петрос Демирчян – д. филол. н., ведущий научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА, секретарь правления Союза писателей Армении. Научные интересы: классическая и современная литература. Автор 3 монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей.
pdemirchyan@mail.ru

THE PROBLEM OF THE MYSTERY OF EXISTENCE IN THE THINKING SYSTEM OF YEGHIA TEMIRCHIPASHYAN

PETROS DEMIRCHYAN

S u m m a r y

Keywords: Yeghia Temirchipashyan, matter, soul, life, death, love, existence, simple, complex, mystery, Nirvana

During the active period of Yeghia Temirchipashyan's activity (1851-1908), in the last quarter of the 19th century, the mysteries of existence: the issues of matter and soul, life, death and immortality were the subject of permanent discussions of the literary, scientific and philosophical thought of the time. The mentioned questions in the true sense of the word were oppressing Yeghia Temirchipashyan's mind and soul. In the end, he stops before the Mystery of Death, the End, the Mystery of Nothing. Yeghia Temirchipashyan's point of view, of course, did not end with the wisdom of the Great Nothing. Particularly, his work "The influence of the Buddha", published under the name Nuria and defined as philosophical novel by the author himself, sheds light on this issue. From this we learn that he was deeply fascinated by the idea of Nirvana while studying Indian history, language, religion and philosophy at school. Then the torturous search for the meaning of existence began… He tried to find the answers to the

mysteries of the world in the ancient writings, in the minds of the wise men of the West and the East, but in vain. “Nobody knew”. Eventually, meeting Jesus, he faced a new truth, the preaching of the idea of the Great Love, according to which “True love is everything”. Thus, according to Temirchipashyan, in an unstoppable and endless process from the simple to the complex, from the surface to the depths, the essence and soul of a human reaches a supernatural state, where “The human becomes as majestic as the mystery, that frightens him, grows”.

Petros Demirchyan – Doctor of Philological Science,. Leading Researcher at the Department of Modern Armenian Literature of the Institute of Literature after M. Abeghian of NAS RA, Executive Secretary at Writer’ Union of Armenia. Scientific interests: classical and modern literature. Author of 3 monographs, numerous literary and literary-critical articles.
pdemirchyan@mail.ru